

## ՄԱՃՑՈՐԴԱՅԻՆ ԽՈՌՈՉԻ ԱԿՏԻՎ ԴՐԵՆԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ՅԵՏԱԳՈՒՄԻ ՎԵՆՏՐԱԼ ՃՈՂՎԱԾՔՆԵՐԻ ԱԼԼՈՅԵՐՆԻՈՂԱՍՏԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

**Մելոյան Ա.Կ., Բարսեղյան Յու.Ա.**

*Մարդու Էկոլոգիայի և ռադիացիոն բժշկության հանրապետական գիտակիրառական կենտրոն,  
Գոմել, Բելառուս  
Երևանի Մ. Յերացու անվան պետական բժշկական համալսարանի վիրաբուժության ամբիոն,  
Երևան, Հայաստան*

Աշխատանքի հիմքում ընկած է onlay եղանակով հետվիրահատական վնասվածքների ալլոհերնիոպլաստիկայի արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Յետագոտության նպատակն է հանդիսացել հետվիրահատական վնասվածքների վիրահատական բուժման արդյունքների բարելավումը հետվիրահատական վերքի ակտիվ դրենավորման եղանակի կատարելագործմամբ:

Onlay եղանակով հերնիոպլաստիկայի ժամանակ պոլիպրոպիլենային ցանցի օգտագործման դեպքում ենթամաշկային ճարպային բջջանքից էքսուդատիվ արտադրության քչացման և վաղ հետվիրահատական բարդությունների հաճախակա-նության նվազման նպատակով Ռեդոնի համակարգին կատարվել են լրացումներ: Կիռարվող բուժման եղանակների արդյունավետության գնահատումը կատարվել է հաշվի առնելով էքսուդատիվ արտադրության բնույթը և քանակը ըստ օրերի, դրենաժային խողովակների առկայության ժամկետների, սպեցիֆիկ հետվիրահատական բարդությունների առկայությամբ:

Ուսումնասիրվել է հետվիրահատական շրջանի ընթացքը՝ կապված հետվիրահատական վերքի դրենավորման եղանակից: Յետագոտության արդյունքները բացահայտել են, որ մացորդային խոռոչի լրացուցիչ վակուումով ակտիվ դրենավորման ժամանակ նկատվել են էքսուդատիվ արտադրության ծավալի վիճակագրորեն նշանակալի քչացում՝ սկսած երկրորդ օրից, հետվիրահատական վերքի դրենավորման ժամկետների կրճատում՝ մասնավորապես 7 օրից մինչև 2 օր: Գրանցվել է վաղ սպեցիֆիկ հետվիրահատական բարդությունների նվազում մոտ 6 անգամ՝ համեմատ վերքի դասական դրենավորման եղանակի, ինչը վկայում է հավելյալ վակուումի արդյունավետության մասին և բարելավում հետվիրահատական վնասվածքների onlay եղանակով ալլոհերնիոպլաստիկայի արդյունքները:

Այսպիսով, ստացված տվյալները վկայում են լրացուցիչ վակուումի բարձր արդյունավետության մասին հետվիրահատական վերքերի դրենավորման ժամանակ: